

ԷԴԻՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ
(Լիտվա)

ՍՊԻՏԱԿ ԵՐԱԶ

Եվս մեկ անգամ եղա Գեղարդում
Ու նորից տեսա սուրբ վեհությունը...
Յոթ հրաշքի հետ միևնույն կարգում
Պիտի գրանցել նրա անունը:

Ժայռ է: Վերից են մխրճվել անահ,
Քարի մեջ վառել այս հրաշքը ջինջ...
Ասես մի կարասս հին գինի է նա,
Որից պորավոր չեմ խմել ոչինչ:

Կամար ու խոյակ, խորան ու խաչեր՝
Եվ այդ ամենը միևնույն քարից,
Չորեղ սյուները՝ հեքիաթի քաջեր՝
Խլված են լեռան կարծր մկանից:

Գինու կարասս է ու հաց է լավաշ,
Դեղնած թերթեր են Ավետարանի,
Եվ գրաբարյան բարբառ, որ, ավաղ,
Լոկ արձագանքն է բերում իր ձայնի:

Աղոթքն՝ աղավաղ սպիտակ մի թև,
Տաղը՝ երկնքից ժամանած մի հյուր,
Սև է ճգնավորն, ագռավի պես սև,
Սակայն հոգու մեջ լույսեր են ու հուր:

Ես ինքս էլ պիտի հոգով բաղձայի
Նման լուսավոր ճգնակեցություն...
Ելնում է ահա ձայնն իմ թախծալի,
Բարձրանում է վեր, իբրև լույս մի սյուն...

Եվ առաստաղի կտր անցքի մեջ
Չատվում է ինձնից սեփական ձայնս
Ու հավերժության արձագանքի պես
Գնում, հենվում է հավերժությանը...

Թարգմանությունը՝ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԼՈՒՅՍ ԱՌԱՎՈՏԻ

(Հատված)

Լո՛ւյս առավոտի,
'Էու, որ նման ես մի մեծ հայտնության,
Իսկ ավելի ճիշտ՝ միակ հայտնությունն հենց ինքդ ես, որ կաս,
Ե՛կ, բռնիր նորից ճանապարհները քո արդարության,
Նորից արյունդ գինի դարձրու և մարմինդ՝ հաց:

Եվ ինձ էլ քեզ հետ տար ճամփաներով որպես առաքյալ,
Ու հավատա ինձ, արժանի եմ ես այդ մեծ ջնորհին,
Նայի՛ր իմ դեմքին, ցոլում է այնտեղ լույս մի տառապյալ,
Աչքերիս նայի՛ր, այնտեղ դարերի թախիծն է խորին:

Ես շա՛տ եմ ապրել... Այն ջրհեղեղի վերջին հառաչից
Ես իմ առաջին աղոթքանման բառերն եմ հանել,
Ես եմ երևի, աշխարհում քամել գինին առաջին,
Առաջին հասկը ես եմ սերմանել:

Եվ արտույտներս՝ թևավոր քուրմեր, բարձրացել երկինք.
Քեզ օրհնաբանող ասք ու տաղով են իմ օրը բացել...
Սակայն հողմեր են եղել աշխարհում, եղել է մրրիկ,
Եվ իմ հասկերն են ասուպների պես տխուր մահացել:

Տե՛ս, այնտեղ հեռվում մենավոր վանքս է կանգնել քարափին,
Կանգնել բարայիկ, տխուր ու փխրուն միանձնուհու պես,
Եվ չե՛ս վարմանում, թե ինչպես ապրեց հողմերի մեջ բիրտ,
Նենգ ու վավաշոտ հայացքների տակ նա ինչպես ապրեց: